

ՍԵՊՈՒՆԻ ԼԵՐԱՆ ՍՈՐԵՎԱՅՈՒՆԵՐԸ.



1. ԻճՆ արքոց գերեզմանք ի թորդան.

Թորդան զիւղ Սեպուհ լերանց Արեւմտակողմը կիցնայ. Երզնկայէ 7 ժամու հեռաւորութեամբ 40—50 տունէ բաղկացեալ հայաբնակ զիւղ մը շինուած գեղատեսիլ բլրակի մը կողքին վրայ: Հոս բոլորովին անվճար վիճակի մէջ է համայն Հայաստանայց աշխարհի սրբափայտերէն ամենէն վեհաշուքը և նուիրականը կոչեցեալ Էն արքոց գերեզման: զանաքան հրաշալի և անմահն ուր կը պարունակէ զմասն ցանկայի նշխարաց սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և սրբոյն Արթմանիսի Գուսկան Գրիգորիսի Գանիէլիս Խաղայ Ըրզրատայ արքայի Աշխէն Տիկնոջ և Խոսրովիկատայ արքայաբորջ: Աշխարհի ամենէն ծայրահեղ սկեպտիկն ալ չէ կարող աւանց հոգեկան սարսուռի մտանալ այս պատմական հոյակապ շիրմներուն որոնք իրենց դարաւոր պատկառելի հնութեամբ որքան տերմախօս նոյնքան զիւրիշ են և հեռաւոր արամանոյջ անհուն խոհերու տակ կրնկճեն ամեն այցելուի հոգին ուր սրտի տէր է և ունի ամենազոյն զգացում իւր մէջ և սոհմային անտարբերութեամբ բոլորովին մեռած չէ: Սոյն սրբափայր հին Քիւզանդեան ոճով կառուցուած է ներքին և արտաքին տաճարներու բաժանութեամբ: Արտաքին տաճարը ունի ըստ սովորականին երեք սեղաններ, իւր պատերը քարուկիր են, իսկ ձեղունը ասաղձներով ծածկուած: Ներքին տաճարը ունի միակ մուտք մը, որ կը գտնուի արտաքին տաճարի աւաղ սեղանի բնին ասի, ուր սովորաբար փոխասացներու գրակալը կը դրուի: Ներքին Տաճարը համակ քարուկիր է, քառակամար և հեռակազէս խաչաձև, որոյ վրայ կը բարձրանայ փասաւոր կաթնուղիկ մը բարձրադիր, ութանիստ վեղարաձև զագաթով վերջաւորուած: Աւնի միակ աւաղ սեղան մը արեւելեան կամարին տակ կառուցուած, որոյ բնին տակ կը հանգչին ցանկայի նշխարք Ըրզրատայ արքայի և Աշխէն տիկնոջ: Կողմնական սեղաններ չունի իւր խաչաձևութեան հետեւնօր, այլ անոնց տեղը ցածկիկ ներքնակամարներ

կան, որոց տակ կը հանգչին մնացորդը Խոսրովադիտայ և Գանիէլիս Հիւսիսային կամարին տակ կը գտնուի Արթմանիսի ս շիրմը, քարուկիր, կառուցուած քառակուսի կաթնուղիկով, որոյ վերայ չորս սիւներու օղնութեամբ բարձրացրած է վեղարաձև գագաթ մը: Ասոր հանդիպակաց հարաւային կամարին տակ կը գտնուի համանման շիրմ մը, որ կը վերաբերի Ե. Գուսկան: Իսկ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին Գերեզմանը կը գտնուի արեւմտեան կամարին հարաւակողմը, ձշղիւ արտաքին սեղանի աւաղ սեղանին տակ, այնպէս որ այցելու ուխտաւորը առաջին անգամ անոր կը հանդիպի ներքին տաճարը մտնելէ յետոյ: Գերեզմանին կողմնական ձևը անշուշտ ներքին տաճարին մուտքը չը խափանելու համար եղած է: Երբմին ճարտարապետական ձևը ձշղիւ Արթմանիսի և Գուսկան շիրմներուն համապատասխան է, միայն թէ սա աւելի մեծ ու հոյակապ է: Սորա սնարին կը գտնուի Գրիգորի Աղուանից կաթնուղիկոսին շիրմը, առանց կաթնուղիկի, անշուք, իսկ Խաղայ գերեզմանը կը գտնուի ներքին տաճարի հարաւակողմը՝ կողմնական աւանդատան մէջ, ուր կը գտնուի նաև եկեղեցւոյ ս աւաղանը: Սոյն սրբափայր այս պաշտելի շիրմները իւր մէջ ամփոփելէ զատ, ունի նաև ոսկիզօծեալ արծաթապատ սուփերու և խաչերու մէջ ձօն հաւաքածոյ մը սրբոց մասունքներու, մասն կենաց փայտի ելն ելն:

Վիւզը իրեն յատուկ առանձին եկեղեցի չունի, հասարակօրեայ եկեղեցական պաշտամունք արտաքին տաճարին մէջ կը կատարուին: Եկեղեցին քարուկիր մասերը իրենց հընտեթիւնը նոյնութեամբ անվճար կը պահեն, բայց մեծ կաթնուղիկի վեղարաձև մասէն, որ շուրջ 15 տարիներ յառաջ նորոգուած է խիստ ճարտարօրէն և հաստատուն կերպով: Աւնի յարկածաճուկ գագաթ մ'ալ իւր հարաւակողմը, որոյ մէջ կը գտնուի արտաքին տաճարին դուռը, ինչպէս մի քանի եկեղեցական վանահայրերու շիրմներ: Վանապատական կալուածներ կը պահսին, բայց պարտիզ մը, որ իւր կիցը կը գտնուի անմիջապէս և որուն մէջ կան մի քանի շիրմներ վանապահ եկեղեցականաց պատկանալ: Այս հաշակաւոր

վանք ի հնումն հաւանական է որ ունեցած ըլլայ հողային ընդարձակ կալուածներ, որոնք սեփականուած ըլլան թերեւս մի քանի տարիներ յառաջ՝ վանապահ ընտանեաց սերունդներէն ինչպէս աւանդարտը կը յիշուի ցայտոր և որուն կենդանի օրինակը ներկայիս կը տեսնուի Սերօյրէ,ք և Քերօյրէ,ք անուանեալ պատմական վանուց կալուածներուն վերայ որոնք շատ մտաւոր ժամանակի մէջ լարարածին եղած են վանապահ—ընտանեաց բաժանեալ եօթն սերունդներուն մէջ, որք կը բնակին այժմ ի Փաւկներ գիւղ:

2. Սերուլբէ և Քերուլբէ.—Սոյն հռչակաւոր հնադարեան վանքը կը գտնուի Սեպուհ լիւանց Արեւմտեան անդնդախոր ձորերէն կազմուած զեղաղուարձ ընդարձակ հովտի մը մէջ, երկուքէն ալ հաւասարապէս 2-ական ժամու հեռաւորութեամբ: Փորզանէն Մեծ Լուսաւորիչ գնալու ձանապարհին վերայ գրեթէ նոյնքան հեռաւորութեան մէջ կը գտնուի հայտնակ Փաւկներ գիւղը, վանուցս հարաւակողմը՝ Սեպուհ լիւանց ստորոտը: Սերօյրէ,ք և Քերօյրէ,ք երբեմն ունեցած է խիստ շէն ու բարգաւաճ վիճակ հին զբոջազիր մատեններու յիշատակարաններուն մէջ կը կոչուի եպիսկոպոսանիստ—աթոռ, որոյ հովանոյն տակ կը պատասպարուին եղբր բազմաթիւ ձգնաղզեայ միարաններ: Այժմ միարանութենէ իսպառ թափուր, ունի շատ անշուք և լքեալ վիճակ մը: Իր ընդարձակ հողային կալուածները, ինչպէս վերև յիշեցինք, անհասներու սեփականութիւն կարծած են այնպիսի շահամուլ անձանց, որք իրր վանապահ գէթ հարկ եղած նորոգութեամբ անվրձար պահէին վանքը, որ խարխիւս յոյժ վշտաւիժ երեոյթ մը կենրկայացնէ այսօր զգայուն այցելուին:

3. Մեծ Լուսաւորիչ.—Մեծահռչակ այս վանքը Սեպուհ լիւան արեւմտեան կողին վերայ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին ննջած տեղին վերայ կառուցուած է, հալիւ մէկ քարընկեց հեռաւորութիւն ունի իւր ձգնարանէն և երկու քարընկեց Մանեայ այրէն, որուն մէջ կը գտնուի ս. Կուսին գերեզմանը քարուկիր: Այս կրկին ձգնարանները կը գտնուին յոյժ մեծազանգուած երկու վիժ-

խարի ապառաժներու առապար կողերուն մէջ: Տեղացիք աւանգարար կը պատմեն թէ՛ ս. Լուսաւորիչ ձգնութեան գալու տակն ասկաւին Մանէ ս. Կոյսը կենդանի եղած է, որով նա ստիպուած իր յատուկ ձգնարանը ունեցած է, բայց ս. Կուսին մահէն յետոյ որ չէ յապաղած, իւր ձգնատեղին Մանեայ այրը բրած է: 1895-ի հանրաձայնութիւն գեղքերուն բարբարոս ձեռքեր վանքին բոլոր շէնքերը քանդիր, աւերակներու շեղջակոյտերով շրջապատեր են իւր հիւարանչ ս. տաճարը, որ նոյն առթիւ սրբապղծուած՝ կը մնայ ցարդ անտէր անտերունջ:

Տասն և հինգ երկարաձիգ գարեբու ընթացքին մէջ իր պերճափառ ձոխութիւնը աւաւել կամ նուազ պահող այս երկցս նուիրական վանքը տասն և իններորդ լուսաւորեալ դարուն վերջացած տարիներուն մէջն է որ այս օրինակ խժողով արաքքի մը կենթարկուի թերևս մեր ծովացեալ մեղքերու բազմութեան հետևանքը: Ենթերը հիմնայատակ կործանուած, ս. տաճարին մեծ կաթուղիկէն քարուքանդ եղած, ներքին սիւներու խոյակները փշուրած, դուռը խորտակուած, վայրի դազանաց առջև բաց մնացած է բոլորովին: Տեսնել այս ամէնը ու չը յուզուիլ ու չը լալ անհնարին է: Ամենամեծ բարեբաղդութիւն պէտք է համարիմք, որ բարբարոսները ս. տաճարի ընդհանուր շէնքին խնայած են, ոչ առ ի զլծոյ՝ այլ հաւանականաբար ինքզինքնին խնայած ըլլալու համար, որովհետև յոյժ անհնարին դժուր էր այդ ընդարձակ հնօրեայ քարուկիր շէնքը քանդելը, որուն ամենախորք յիստին փշուրը գիտէ քաջ կուուիլ երկաթին հետ ու զիւրու խորտակել զայն:

Սոյն սրբափայր այ ունի ներքին և արտաքին տաճարներ: Արտաքին տաճարը ունի միակ աւաղ սեղան մը, որոյ բնմին տակ կը գտնուի կամարակալ ընդարձակ մուտք մը՝ որ կառաջնորդէ այցելու ուխտաւորը ներքին տաճարի միջին մատրան մէջ, ուր ցածկիկ բնմի վերայ բարձրացած է միայն վեմքար և որոյ մէջ՝ հիւսիսակողման որմին առջև, կը գտնուի ս. Գրիգոր Լուսաւորչի երկցս պաշտիկ ս. գերեզմանը, որու վերայ բարձրացած էր երբեմն քարուքանդ եղած հոյակապ կաթուղի-

կէն, որուն թողած բացուածը այժմ ատաղ-
ձով ծածկուած է, ս. զերեզմանը անձրեւէ ու
ձիւնէ պատասարելու հոգածութեամբ:

Ներքին տաճարի հիւսիսային կողմնական
մատուռին անցքը կը դանուի արտաքին տա-
ճարին մէջ, իսկ հարաւակողման մատուռը
ներքին անցքով մը կը հարկողակցի միջին
մատրան հետ, ճշդիւ ս. զերեզմանին զիմնցով:
Կողմնական մատուռներն ալ սեղանէ զուրկ
վէ՛մ—քար միայն ունին ցածկիկ բեմերու վե-
րայ: Քարուկիր մատուռիկ մ'ալ կառուցուած
է Բարբէկո՛ւմ անուանուանեալ աղբեր վերայ մօտ
ս. Լուսաւորչի անձնական ձգնարանին: Բարե-
բազդապէս սա ալ բոլորովին անեղծ մնացած
է: Սոյն հրաշափառ վանուցս շուրջը կը զբա-
նուի ընդարձակ տարածութեան վերայ Սոճիի
(չամ) և Զրթիի ծառերէ, բաղկացեալ թաւա-
խիտ անտառ մը, որ վանուց սեփականութիւնն
է և որու դարուոր ծառերը՝ անպաշտպան,
հսկողութենէ զուրկ մնացած ըլլալուն պատ-
ճառաւ, շրջակայ զիւղացիք անխնայ Զարդե-
լով երգնկա վաճառելու կը բերեն:

250—300 օտմ լիրայի դումար մը կհար-
կաւորի թէ այս և թէ ուրիշ մէկ քանի
աւերակ դարձած վանքերու (որոց վերայ
ունիմ՝ զրել) անհրաժեշտ նորոգութեաց
գործածելու և, զանոնք վերստին բնակելի
դարձնելով, վանապահներու յանձնելի վիճա-
կին մէջ դնելու նպատակին համար: Եթէ ո՛չ
քիչ ասեմէն ասոնք բոլորը հանգած վանքե-
րու դժբաղդութիւնը պիտի ունենան տեղա-
կան ոյժերու բացարձակ անդոյութեան պատ-
ճառաւ:

4. Աւագ վանք.—Սեպուհ լեռանց շրջ-
լային մէջ կը գտնուի: Սա ըստ աւանդու-
թեան առաքելաշէն է, հիմնուած յանուն ա-
ռաջին լուսաւորչաց ազգիս՝ ս. Բարդէոս և Բար-
դուղիմոս առաքելոց: Այս վանքն ալ հանրա-
ճանօթ զէպօքերու ատեն կողոպտուած է և
բացի իւր կրկին ս. տաճարներէն, մնացեալ շէն-
քերը ամեհամեծ մասամբ քարուքանդ ըլլալով
անբնակելի դարձած է: Այժմ սկսած է բնակե-
լի դառնալ մի քանի սենեակներու նորոգու-
թեամբ: Այս վանուց վանապահութիւնը դա-
րերէ ի վեր Բրոխորոնեանց բաղմանդամ ցեղին
վերապահուած է: Իր վերջին վանահայրը

Վարդան վարդապետ (շուշտակ) Բրոխորո-
նեանց՝ հանրաճանօթ զէպօքերու աթիւն է:
Պոլիս աքսորանաց մէջ կը գտնուի, ուր ս.
Փրկչի Ազգ. հիւանդանոցի մատրան քարոզիչ
կարգուած է:

Այս վանքն ունի երկու քարուկիր տա-
ճարներ՝ յանուն ս. Աստուածածնի և կրկին ս.
Առաքելոց—վեհաշուքս սքանչելի որոց շուրջ
ուրեք ուրեք կամարակապ փոքրիկ քարուկիր
խցիկներ շինուած են բաւական թուով, որոնք
անշուշտ ի հնուսն ձգնարաններ եղած ըլլա-
լու են: Ս. տաճարները, խնչպէս անոնց փայ-
տաշէն քանդակազարդ դռները՝ որոնք միւս-
ներու հնութիւնը ունին, անվթար կը մնան:
Նոյնպէս Բարբէկո՛ւմ յաջողած են ազատել շատ
մեծ թանկագին հնութիւն մը Կեղախո՛ւմ ա-
նուանեալ, որ պատմական հոգակ ունի: Զե-
նոր Գլահացի պատմիչը կը յիշատակէ երկու
գոհարակեր, զորոնք Գրիգոր Լուսաւորիչ ըն-
դունած է Կեղսիոս արքեպիսկոպոսէն, այս
հնութիւն այդ երկու ակերէն մին ըլլալ կը
կարծուի: Սոյն վանք թէև ունի բաւական
ընդարձակ մշակելի և անտառապատ հողային
կալուածներ, սակայն անբաւական են վանա-
պահ ընտանեաց ասորուստին նորոգութեան
շատ մեծ պէտք ունի, որով և հետեւապէս ար-
տաքին նպաստի կարօտ է անհրաժեշտապէս՝
ըստ կարի շէն վիճակ մը ստանալու համար:

5. Կայիփոսի ս. Յակոբ.—Սեպուհ լե-
ռանց շրջլային մէջ, Երզնկայի գաշախն տիրող
բարձրադիր գագաթի մը զեղատեսիլ լեռնա-
գաշախն վերայ կառուցուած է. եկեղեցաց դա-
ւառին կանգուն ինն վանքերէն մին է, որ
այժմ աւերակաց կոյտ մը կը ներկայացնէ՝ բա-
ցի իր քարուկիր, հնաշէն, հոյակապ ս. տա-
ճարէն, որու փառաւոր կաթուղիկէն արտա-
քին սրբատաշ քարերը բարբարոս բիրտ ձեռ-
քերը քանդելու յաջողած են: Աւեր բաւա-
կան մշակելի վարելահողեր, զորոնք մշակելու
համար վանքին մէջ վանապահ մը ունենալ
պէտք է: Առ այժմ հարկ տեսնուած է քիւրտ
ընտանիք մը մշակ—վանապահ գնել մէջը,
վանքը և իր հողերը կորստեան չը մասնուե-
լու համար, և սակայն թշուառական քիւրտը
սա ի չզոյէ պատուարանի ներքին տաճարը
իրեն բնակատեղի ըրած է, իսկ արտաքին տա-

ճարը իր անասնոց ախոռս որուն մէջ աղբա-
կոյտի ահադին գէղ մը բարձրացուցած է:

Այս ինչպէս և զաւառիս միւս բոլոր
փանքերը առտուել կամ նուազ՝ ամէնն ալ նո-
րոգութեանց կը կարօտին:

Առաջնորդ երիզայի
Գանիկ վարդ. Յակոբեանց



ԱՍՏՈՒԹԱՐԱՆՈՒԹԻՒՆ Ե ԿՐՕՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Արարտաի մայիս — յունիս համարի առաջ-
նորոգում Կ. Վ. նպատակ է զնում պար-
գարանի պատմական տեսակէտից քրիստոնէու-
թեան իսկութիւնը նրա էականն ու մնայու-
նը՝ ծանօթացնելով պրոֆ. Հառնակի Քրիս-
տոնէութեան իսկութիւնը գրքի հետ, որ
չառ անտեղի և մոլեւանդ յարձակումների
նշմարկեց և դեռ մի տարի չբացած՝
որդէն 5 հրատարակութիւն է տեսել, մօտ
25000 օրինակ տարածուած է:

Միայն կարևոր վէճ, որ բաւական ժամանակ
է տեւում է, արժանի է նոյնպէս ոչ պակաս ու-
շադրութեան մանտանդ որ վերև յիշուած
խնդրի հետ սերտ կապ ունի Կ. Վ. ի դրած
խնդիրը մի այլ կողմից պարզարևում է և
նոյն պրոֆ. Հառնակի մի ուրիշ նորադոյն
գրուածքի նիւթ է գարձել: Գա իսկապէս մի
կենսական խնդիր է աստուածարանութեան
համար, ամէն կողմից վազուց ի վեր լսելի են
նոյնը, նշանաւոր գիտնականներ անգամ
(Պատր. Գ. Լաբարդէ) գոչել են և գոչում են.
Աստուածարանական ֆակուլտեան այնպէս
ինչպէս որ նա այժմ կայ իրաւունք չունի միւս-
ների կողքին գոյութիւն ունենալու. նրա շրջա-
նը իրատ սահմանափակ է, նա կամ պէտք է փո-
խախտական ֆակուլտեան միանայ կամ ընդ-
հանուր կրօնների պատմութեան ֆակուլտեա
րանայ (Allgemeine Religionsgeschichtliche
Facultät), որի մէջ բոլոր գիտականութիւնը մահ-
մեղականութիւնը և այլ կրօններ նոյնչափ ու-
սումնասիրութեան նիւթ պիտի լինեն նոյն-

չափ դասխօսուին, որչափ քրիստոնէականը:
Աւելի չափաւորները պահանջում են միայն
մի կամ մի քանի ամբիոն աստուածարանա-
կան ֆակուլտետում՝ յատկացնել ընդհանուր
կրօնների պատմութեան: Յայտնի է, որ այս
շարժումները պատճառ դարձան Հոլանդիա-
յում աստուածարանական ֆակուլտետների
վերացնելուն, այլ երկիրներում օրինակ Ֆրան-
սիայում, սպասում է նոյնը որից երևում
է որ խնդիրը լուրջ կերպարանք է ստանում:

Այս խնդրի մասին պրոֆ. Հառնակ մի
նախ խօսեց օգոստոսի 3-ին Բերլինի համալ-
սարանում իրրև համալսարանի այժմեան տե-
սուչը*, որ 5 օրուայ մէջ արդէն սպաղորուած
հասարակութիւնը օրինակներով տարածում էր.
Շատի վերնադիրն է. Աստուածարանական ֆա-
կուլտետների նպատակը և ընդհանուր կրօն-
ների պատմութիւնը**:

Հառնակ նախ մէջ է բերում համառօտ
կերպով հակառակորդների 3 հիմքերը. ա.
կրօնները ներկայացնում են մի սանդուխտ, ա-
սում են նորայ այդ պատճառով անհրաժեշտ
է բոլոր աստիճաններն ուսումնասիրել, բոլոր
կապակցութիւնները պարզել, այն միջոցներն
ըմբռնել, որոնցով ազդերը կրօնը բարձրացնել
են ձգտել: Այս տեսակէտից կարող է շատ
իրաւացի թուալ պահանջը և միայն մի կրօ-
նով զբաղուելը մի անխմատ կրճատումն է.
Բոլոր կրօնները կարելի է միմիայն միևնոյն
պատմագիտական եզանակով ուսումնասիրել, որ
կամայականօրէն կրճատուելու են թակայ չէ.
Ինչպէս որ այդ պատմագիտական եզանակը ոչ
մի ժամանակակից սահման չէ՝ ճանաչումն
այնպէս էլ անցնում է մի սղղակից նիւթից
դէպի միւսը, առանց օրէէ ստիպման. նա չի
ճանաչում անանձին անանձին անդամներ, այլ
միայն կապակցեալ միութիւններ, շղթաներ.
Քրիստոնէութիւնն ևս նոյն եզանակով պիտի
ուսումնասիրել, ուրիշ կապակցուած միւս
կրօնների հետ. Գ. Վերջապէս, հիմնականների

* Գերմ. հասարակական, ինչպէս յայտնի է
նուազ մի շարով և շարում, հերթով այս կամ այն
ժախոչնեղ ուսուցչականից:

** Die aufgabe der theologischen Facultäten und
die allgemeine Religionsgeschichte. A. Harnack. Giessen.
1901.